

Հետ այլազգոյ մի խմեր, կամ հետ մարդոյ՝ որ նախանձ ունիս :

ի քո նմանոյտ քով նստիր :

ի կենդանութեանդ զտանդ իշխանութիւնն և զղբամդ՝ ի տղիդ ձեռն մի տար : Թարաքայ<sup>1</sup> մի որ հեռու տեղաց դայ՝ զոտով առ :

Երբ՝ ի դատաստան երթաս՝ դու յետոյ գնա :

Երկու բան տարեկուս կայ, մէկ որ մսացուն<sup>2</sup> ցած լինայ, երկու որ մարդն կապած ենայ : Երկու տարեկուս այլ կայ. մէկ որ պարտուտէրն՝ ի դուռն գայ . երկու որ ինքն ծեր լինայ և մատղաշ կին առնու :

Տուն մի շիներ՝ ի ճանապարհի վրայ, ոչ՝ ի խանի քով ոչ՝ ի բերդի քով, ոչ՝ ի ձորերան և ոչ՝ ի խասապն :<sup>3</sup>

Բարեկամութիւն չունի ոչ խասապն, ոչ պօյաճին,<sup>4</sup> ոչ ջաղջիպանն և գինեծախն, և այլ :

Երկը մարդու խօսք անցնուկ լինի, հարստին, մահպուպին,<sup>5</sup> ամաքտարին :<sup>6</sup>

Թէ ուզես որ հօրմաթ<sup>7</sup> անես՝ սիրելիի մօտ կամ վարդապետի մօտ երթաս, դարտակ մի երթար . և ոչ յուխտատեղ առանց խընկի և մոմի մի գար :

Թէ ուզես որ մուրատ<sup>8</sup> առնես և ուրախանաս, վաղուին ճաշուն՝ խլէ և կեր, օրհասրկին գնէ ու կեր, իրիկունն թէ ձրի տան՝ մի ուտեր :

Լաւ՝ հոր մի հաց պարտական, քան փոր մի հաց :

Զար աչաց բարի մի ցըցներ, և ոչ չար ականջի՝ բարի մի իմացներ :

Զարմիատ<sup>9</sup> ձեռացդ մի հաներ, և զբո բանդ ձեռօքդ հոգա :

Զիսաբարն<sup>10</sup>՝ ի տղէն առ և ի հարբածէն և ի կնկնէն :

Ի գիներբոնս շատ մի յեմեր<sup>11</sup> շառ է:<sup>12</sup>

1. Թուի թէրէտէ, ժառանգութիւն, կամ թէրէտէ ազգ հինահար : — 2. Ապիտելի, (պանըըմալէգ): — 3. Թուի գէսիպ, աւազուտ տեղի : — 4. Երկարար : — 5. Բժիշկ : — 6. Երախտաւոր, արդիւնաւոր : — 7. Մեծարել, պատուել : — 8. Զուտրճանալ, լնուլ զկամս : — 9. Դրամադուի : — 10. Լուր : — 11. Մէ յամեր, մի ու շանար : — 12. Զար, մոլութիւն :

Զքո բանդ այլոց քապով<sup>1</sup> մի ձգեր : Դարձեալ գիտացիր որ երկը մարդ կան յաշխարհս խոտելի . նախ այնք՝ որ ոչ գիտեն. երկու՝ որ գիտեն զինքեանց ոչ գիտելն և ոչ հոգան զի գիտացեն . երկը՝ որ ոչ գիտեն՝ և խոտեն զգիտողն :

Դարձեալ գիտութիւն յերկու դէմս բաժանի . մէկ զի գիտէ և գիտէ զի գիտէ և զգիտութիւն խոստովանի . առ իմաստուն է և հեզ, ուսիր ՚ի նմանէ : Երկու որ ոչ գիտէ և գիտէ որ ոչ գիտէ, և ըզտգիտութիւն խոստովանի, և զսա իմաստուն գոյ ասել, զի գիտաց զչափ անձին իւրոյ :

Դարձեալ տգէտն որ ոչ գիտէ և գիտէ որ ոչ գիտէ, և ասէ թէ գիտեմ յանդուզն է և լիրը, փախիր ՚ի նմանէ : Երկրորդ, որ ոչ գիտէ և չգիտէ թէ ոչ գիտէ, և ասէ եթէ գիտեմ, այն մոլեզնեալ է և գիւահարեալ, հեռացիր ՚ի նմանէ :

Յոյս :

Ես ճանչցեր էի զայն . տասն և չորս գարուն իրենց գեղեցկութիւնը տուեր էին անոր . երեսները վիթըթեցուցեր էին անմեղութեան ծաղկի մը պէս : Ոդն կարծես թէ կու լուսաւորուէր անոր չորս կողմը, և ճառագայթներով կու զարդարէր գնա : Եթէ յուսոյ հրեշտակն մեզի երեսլու ըլլար՝ անշուշտ անոր պայծառ աչուըներովը, անոր քաղցր դիմնըը, և անոր անբացատրելի ժակտովը պիտի երևէր : Ի՞նչ պէտք է ըսել մօրն երջանկութեանը, երբ կու գիտէր այսպիսի սիրելի զաւակ մը . անոր երջանկութեանը, երբ մարգ՝ իրեն երանի կու տային, երբոր ապագայն կու ցուցընէր իրեն երկայն ուրախութիւններ,

1. Թէրես Քէտպ, գարշապար, ոոք :

հեռու և զմայլեցուցիչ տեսարաններ։ Ոչ պէտք է մանաւանդ պատմել իր ցաւը։ Շուք մը անցաւ, և ամէն բան կուրոյս, բայց 'ի արտառունքէն։ տապանաքար մը բացուեցաւ, ու ամէն բան կը լից։ ուրիշ բան չթողուց՝ բաց յանմխիթար յիշատակէ։

Տեսէք այն նաւը՝ որ կու զարնուի կու խորտակի, մինչ գեռ նաւահանգը տին մօտեցած էր։ Ծովն կու ծածկուի անոր կոտորանգն, թշուառներ կու կոռուտին ալեաց դէմու կույաղթուին։ Կակըծեցուցիչ աղաղակներ կու թնդացընեն ծովեղերը։ բարեկամ իր բարեկամին կու սպասէ, ամուսին՝ ամուսնոյն, մայրն իր աղջրկանը։ Արդէն նաւէն և ծովեղերքէն ձայները կու հասնէին մէկմէկու։ բազուկներ կ'երկըննային, ամէն տեսակ քաղցրութեան և սիրոյ նշաններով։ Այս եղաւ դարձն։ այս եղաւ երջանկութիւնն ։ Ոչ այս էր յափտենական մնաք բարով։ այս էր մահն։

Ի՞նչ կու նշանակեն այն տերեւաթափ ծաղիկներն, այն սփուեալ անուշահոտութիւններն, այն ներդաշնակ երգերն, այն արագ պարերն։ Ասոնք հարաննեաց տօներ են, և անոր երջանկութիւնն։ Բայց ով երկինք։ գորգերն կու բռնկին, կրակն կու սաստկանայ, մէկն կու զարհուրի, մէկային կու փախչի։ մանկամարդ հարսն կ'ընկնայ և կու մեռնի բոցերուն մէջ։ ամէնքն ափանս կանչեն։ Սակայն երանի իրեն։ ինքն չէ որ պիտի անիծէ հարսանիքը և անոր մնութի խոստմունքները։ ինքն ալ պիտի չփնտոէ քուրջեր իր տղաքները ծածկելու համար, ոչ հացի կտոր մը՝ զանոնք մնուցանելու. ալ պիտի շոպասէ անոնց լալով մթին ապաստարանի մը մէջ, որուն ճամբան գթութիւնն կրնայ գտնալ. ալ ինքն շոայլութեան և հարստութեան մէջ պիտի չզգայ սըրտախոց սուրեր. և ոչ ապերախտութիւն և անհաւատարմութիւն զինքը կամաց կամաց 'ի գերեզման պիտի տանին. վերջապէս ինքն չէ որ պիտի կոչէ զմահ։ օգնութեան, այն մահն՝ որ իրմէ

քիչ մը ուրախութիւն կու պակսեցնէ, և շատ նեղութիւններէ կ'ազատէ։

Ուրեմն կայ Յոյս մը որ կու գայ մեղի ծաղիկներով և ժպիաններով։ բայց իր ծաղիկներն անցաւոր են և խնտումն խարող։ ինքն հետը կը քալեցընէ հրապուրիչ պատկերներ, բայց ցնորական են։ այսինքն, հաւատարիմ բարեկամներ, երջանիկ ամուսիններ, փարելի և անուշակ զաւակներ։ ինքն կու պսակէ իշխաններ, ծերեր կ'երիտասարդացնէ, ուկի կու ցանէ փոշոյ պէս։ առողջութիւնը կու պահէ կենդանի և թարմ գոյներով։ ամէն տեսակ հաճոյք կու թռչարտին իր չորս կողմը։ ինքն կու բանայ իսաւարչատին բանտերը և կու խորտակէ շղթաները։ ժողովուրդը՝ անոր անցած ճամբուն վրայ՝ ազատութեան աղաղակներ կու բարձրացնեն։ ինքն կու ցուցընէ ճարտարմութեան մրցանակներ, կու խոստանայ փառք և համբաւ. եռանդագին բազմութիւն մը կու դիմէ իրեն, անոր չնորհներէն մաս մը գտնելու։ Այս Յոյս՝ դուստր է երկրի և խարբէութեան։

Կայ դարձեալ ուրիշ Յոյս մ'ալ՝ որ կ'երթայ երբեմն անոր առջեւն, անոր ընելու չարութիւնը գուշակելու համար, երբեմն ալ անոր ետեւն կու գայ անոր ըրած չարութիւնը ծածկելու համար։ Այս Յոյս՝ դուստր է ճշմարտութեան և երկնի։ Աս ալ անթառամ ծաղկաք զարդարուած է, և իրեն ճակտին վրայ ժպիտ և տրտմութիւն խառնուած են, աշացը մէջն ալ կան միանգամայն արտասուք և անդորրութիւն։ ինքն կու քալէ շրջապատեալ ճշմարիտ և միխթարիչ պատկերներով։ իր չորս կողմը կու պատեն թողեալ բարեկամիք, մատնեալ ամուսինք, տառապեալ ընտանիք, բայց զարմանալի քաղցրութեամբ մը կու թափէ ամենայն թշուառաց վիրացը վրայ բալասան և արտասուք։ Սա կու թեթեցընէ թազերու ծանրութիւնը, կ'ուրախացընէ ծերը, երիտասարդին աշխուժութիւն կու տայ, և կու զրգուէ զտղայս։ Սա կու մոնէ խաւարչակին բանտերուն մէջ, որպէս զի ծանր

շղթաները թեթևցընէ . հայհոյող շրթանց վրայ աղօթք կու զնէ . և յանցաւորը վրէժինդիր սուրին տակ՝ հրու կու կեցընէ : Սա կու խոստանայ ժողովը . դեան սուրբ ազատութիւն և կատարեալ փառք : Սա ամէն ճանապարհաց վրայ կու կենայ՝ դժնիկը խլելու, օդին մէջ շանթը հանդարտեցընելու համար . խորանաց քով օգնութիւն գտնելու համար, գերեզմանին եղելքը՝ երկինքը ցուցընելու համար : Այսպէս այն ամէնքն զորս աշխարհային յոյսն խարած, վիրաւորած թողեր էր, կու զառնան դէպ՚ի իրեն և ուրիշ բանի չեն ուզեր բանալ աշուրնին, բայց եթէ անոր պայծառ նշոյներուն . ոչ ուրիշ բան լսել բայց եթէ անոր հեռաւոր ներդաշնակութիւնները, և անոր երկնային և զովացուցիչ շնչին դէմ՝ բանալ իրենց կուրծքը : Ինքն կու զնէ անոնց սրտին մէջ եղեմական ուրախութեանց առհաւատչեայն, և իրեն հեռաւոր ներդաշնակութեանց բարեպաշտ արձագանգը :

Ո՞վ Յոյս, երկնային Յոյս, դու կու զմայլեցընես, դու կու յափշտակես զիս : Ո՞վ դու քաղցր արշալոյս պայծառագոյն օրուան մը, փառաւոր դեսպան լաւագոյն աշխարհի, միմիթարիչ ամենայն շարեաց . թերես դու ես միայն բարին կենաց, վասն զի դու միայն կու մնաս անհանգիստ կամտագնապեալ՝ ՚ի խորս հոգւոյն, քու անմահական խոստմունքներովդ : Աշխարհային յոյսն ամպոյ մը կու նմանի զոր քամին կու ցրուէ . թեթև փրփուրի՝ որ խաղալիկ կ'ըլլայ մրըր կին . ծխոյ մը՝ որ կու ցնդի դատարկ օդուն մէջ : Չեմ ուզեր ես զանիկայ, այլ զքեզ . և քեզի կու թողում հոգիս և սիրոս : Թող ուրիշներն վստահանան իւրենց կառացը և իրենց ձիոց երագութեանը վրայ, անբաւ հարատութեանց վրայ և ծառայից ու գերեաց բազմութեան վրայ : Դու ինծի սիրել տուկր զԱստուած՝ իմ պղտիկութենէս՝ ՚ի վեր . և պիտի սիրեմ զնա ինչուան՝ ՚ի գերեզման : Զարագործի յոյսն պիտի կորսուի, բայց դու, դու պիտի շամրջնաս : Քու կին սոսոյդ և սրբազան նշանդ՝ խաչն է .

և ես կ'ողջունեմ զնա և կու գրկեմ . և զինքս կու նուկրեմ անոր ցաւոցը . յիշելով զայն՝ որ կու սերմանէ արտասուզք և պիտի հնձէ ուրախութեամբ :

Ո՞վ Յոյս, երկնային Յոյս, դու եղիք իմ աստղս՝ ՚ի խաւարի, իմ խարիսխս՝ ալեաց մէջ : Թող մարդիկ խոռվին, թող թագաւորութիւնք սասանին, թող բոլոր տիեզերքս դղրդի, դու զիս միշտ անշարժ պահէ քու զօրութեամբդ :

Եւ երբ մահն գայ, կ'ուզեմ քու գրք կացդ մէջ հանգչեցընել իմ ցաւագին գլուխս և նուաղեալ սիրոս : Քու ձայնիդ մրմունջն՝ դիւրացընէ իմ օրհասական տագնապս : Խառնուի իմ վերջին հառաջանքս քու թևերուդ ձայնին հետ . և քու ջահդ հսկէ իմ մոխրիս վրայ . ինչուան որ Աստուած հրամայէ քեզի՝ նորէն կենդանացընելու զանիկայ, և ծագելու յաւիտենական օրը՝ իմ շացեալ և ափշեալ աշացս վրայ :

թ.

## Գարուն :

Զմեռն իր ձիւնը և պաղպաջուն սառամանիքը թօթափելով, մեր սպիտակացեալ և անսնունդ դաշտերը ազատ կը թողու նորածիլ բողբոջներու՝ և աւանդելով զանկենդան բնութիւնն առկենսատու և հովասուն զեփիւներ, կը մեկնի իր տխուր ազգեցութիւնը հողագնտոյս միւս կողմը տանելու . յաղթական քայլերով կանխաժաման գարունն կը վոնտէ զայն . նոր արե, նոր լոյս, նոր կեանք, նորանոր ակնկալիք, սիրատենչիկ զգացումներ բերելով հետն, իրրե պարգև Արարշին առ մահացու բնութիւն, ՚ի վայելս նիւթական ու բանաւոր մարդոյս : Ընդհանուր յեղափոխութիւն մը կլիմայիս վրայ կը ներդործի . ծննդեան ու աճման միջոցէ . բնութիւնն իր մեռելատիպ պատմուճանը կը մերկանայ . երկիրս կը պատառի, ու իր ծոցէն սպիտակափայլ ծլիկներ կ'արձըկէ, որոնց արեգական